# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

# ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «22» Նոյեմբերի 2019թ.

2019թ-ի նոյեմբերի 20-22-ը, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով (համակարգչային տեխնիկա) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | | |
|---|---|---|
| Նարինե | Ջիլավյան | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կազմակերպատնտեսական բաժնի պետ՝ նախագահ. |
| Արտակ | Շահբազյան | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի առաջին տեղակալ ՝ անդամ. |
| Մարետա | Խաչատրյան | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ ՝ անդամ. |
| Հրաչ | Պողոսյան | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ Լաբորատորիայի ղեկավար,ԼՓԿ ղեկավար ՝ անդամ. |
| Արամ | Չուխաջյան | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ Համակարգչային ցանցի սպասարկման մասնագետ ՝ անդամ. |

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Նարինե Ջիլավյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

## 1. ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Նարինե Ջիլավյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | Սեղանի համակարգիչ | 4 030 000 |
| 2. | Պրոյեկտոր | 250 000 |
| 3. | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք | 450 000 |
| 4. | Տպիչ սարք | 315 000 |
| 5. | Գունավոր տպիչներ | 420 000 |

ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը «17:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ | - | Artak.baghdasaryan@doxx.am |
| 2 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ | - | corp@patron.am |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ՍԱՐՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

| Չափաբաժնի համարը | Մասնակցի | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |
| 1 | 1 | «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ | 2 957 500 | 3 549 000 |
| 2 | 1 | «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ | 177 650 | 213 180 |
| 3 | 1 | «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ | 350 000 | 420 000 |
| | 2 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ | 367 000 | 440 400 |
| 4 | 1 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ | 233 500 | 342 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | 2 | «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ | 23350 | 280200 |
| | | | | |
| 5 | 1 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ | 275500 | 330600 |
| | 2 | «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ | 285000 | 342000 |

Որոշվեց՝

1. Նարինե Ջիլավյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընթացակարգի 1-5-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

## 2. ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով 1-ին չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող

աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Նարինե Ջիլավյան ____________

Հանձնաժողովի անդամներ՝

ԱրտակՇահբազյան ____________

Մարետա Խաչատրյան ____________

Հրաչ Պողոսյան ____________

Արամ Չուխաջյան ____________

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան